

ԱՆԻ ՖԻՇԵՆԿՅԱՆ /ՖՉՆԿՋՅԱՆ/

ՀՀ ԳԱԱ պարմության ինստիտուտի ավագ գիտաշխատող
պարմական գիտությունների թեկնածու
fishenkjianani@hotmail.com

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻՈՅ ՀԻՒՍԻՍ- ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ ԳԱՂԹԱԾ ՊՇԵՐԻԿՑԻ (ՔՐՏԱԽՕՍ) ՀԱՅԵՐՈՒՆ

Քանալի քառեր՝ Պշերիկցի հայեր, Գաղթականաց խնամատարական կեդրոնական յանձնախումբ, Սուրիա, Թէլ Պրաք, Գամիշլի:

Քենալական ազգայնական շարժման յաջողութիւնը եւ Մուստաֆա Քենալի կողմէ Թուրքիոյ Հանրապետութեան հռչակումը վերջ չտուաւ հայերու հալածանքներու Թուրքիոյ պետական քաղաքականութեան: Ընդհակառակը, քաղաքականութիւնը նոր ձեւ ստացաւ, այն էր՝ նորահռչակ պետութեան համար որդեգրել համացեղական քաղաքականութիւն: Իրականացման համար նոր վարչակազմը հետամուտ եղաւ ինչպէս հայաբնակ այլ շրջաններու, նոյնպէս Պշերիկի¹ շրջանի հայաթափութեան քաղաքականութեան²: Քաղաքականութիւն մը, որ կը միտէր Արեւմտահայաստանը պարպել հայերու մնացորդներէն: Այսպիսով, 1923-ի դրութեամբ հայերու նոր խումբեր ստիպուած պիտի ըլլային լքել Թուրքիոյ նորակազմ հանրապետութեան հարաւ-արեւելեան շրջանները /Արեւմ-

¹ Հայ մամուլի եւ գրականութեան մէջ Պշերիկը (Բշերիկ, Բեշերի, Բըշերիկ, Բիշէր, Բիշիրի, Բուշերիկ, Պըշերի Պշերիկ) կը յիշատակուի իբրեւ գաւառ կամ գաւառակ (**Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստեփան Տ., Բարսեղյան Յ.Խ., Հայաստանի և հարակից շրջանների Տեղանունների Բառարան**, հ. Ա., Երևան, ԵՊՀ Հրատ., 1986, էջ 713–714):

² **Մսրըլեան Չ., Թուրքիոյ Ներքին Գաւառներու Հայոց Պարտադիր Արտագաղթը (1929–1930 թթ.),** Հայկազեան հայագիտական հանդէս, Գ. տարի, 1972, Պէյրութ, էջ 102–105:

տեան Հայաստանի ներքին գաւառները/ եւ ապաստանիլ Սուրիա: Փախստականները վերապրած արեւմտահայութեան մնացորդներն էին, որոնք դեռ չէին լքած իրենց հայրենիքը եւ քողարկուած կը շարունակէին ապրիլ տեղի քիւրտ բնակիչներուն հետ:

1925-ին քրտական ապստամբութեան բռնկումէն ետք, յատկապէս, Տիգրանակերտի եւ Բաղէշի նահանգներէն, գաղթականներու նոր հոսք կը սկսի Սուրիա, յատկապէս, Հալէպ: Որոշ տեղեկութիւններ կը հաստատեն, սակայն, որ 1925-ին Գամիշլի բնակութիւն հաստատած են արդէն Հասիչէն, Տէր Զօրէն, Ռազգայէն, Ռաս Ուլ Այնէն եւ Հալէպէն եկած հայ ընտանիքներ³: Ֆրանսական բանակի ներկայութիւնը եւ ֆրանսացիներու կողմէ Գամիշլիի գրաւումը (1926-ին) խրախուսած էր Թուրքիոյ սահմանամերձ շրջաններու քրիստոնեաներու գաղթը դէպի Սուրիա:

1927-էն ետք Սուրիոյ հիւսիս-արեւելեան շրջանները հասնող գաղթականներու մեծ մասը Թուրքիոյ քրտաբնակ գաւառներէն, յատկապէս «Տիգրանակերտի նահանգի Պշերիկ-Ռըշգոթանի»⁴ շրջանէն արտաքսուած եւ Գամիշլիի ու Հասիչէի մէջ համախմբուած քրտախօս /շուրջ 150 ընտանիք⁵/ եկուոր հայեր էին: Անոնք, Ճեզիրէթ Պոթանի⁶ կամ Պշերի լեռներու բնակիչները հանդիսանալով,

³ Թովուգյան Հ.Օ., *Միրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն*, Երևան, 1986, էջ 170:

⁴ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն Արխիւ Բերիոյ Թեմ, /յետայսու՝ ՄՏԿԿԱ ԲԹ/ հաւաքածոյ /հ./3, ցուցակ /գ./1, թղթածրար /թղծ./ 43-թերթ /թ./ 13: Տ. «Մկրտիչ Քահանայ Մուրատեանի որ Ռասիւլայն, Հասիչէ, Ամուտա եւ Գամուշլու այցելելով մխիթարէ տեղւոյն մեր ժողովուրդը, մանաւանդ, այցելէ այն 65 տուն քրթախօս հայ ընտանիքներուն, որոնք վերջերս Պշերիկի կողմէն գաղթած էին դէպի Խապուր գետի հովիտը»: /Տե՛ս ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 43, թ. 13:

⁵ ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղծ. 43, թ. 13: Վ. Առաջնորդի Հայոց Բերիոյ Մկրտիչ Քենյ. Մուրատեան նամակը Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Սահակ Բ.-ին:

⁶ Պութան կղզին / Իպն Օմար կղզի կամ Նահատակաց կղզի/. կը գտնուի Անատոլիայի հարաւ-արեւելեան շրջանը, Իրաքի եւ Սուրիոյ սահմաններու մօտ: Այս կղզիի բնակիչներու մեծամասնութիւնը ասորիներ եւ սուրիանիներ են, նաեւ արաբներ: Հարաւէն, հիւսիսէն եւ արեւելեան կողմերէն սահմանակից ըլլալով Տիգրիս գետին՝ կոչուած է կղզի:

տեղանունի հիմամբ կոչուած էին պշերիկցիներ: Վերոնշեալ շրջանի հայութիւնը⁷, բռնագաղթի ենթարկուելով, ստիպուած էր հետիոտն անցնիլ Տաւրոսեան Լեռները: Ճամբան չեթէներէն կողոպտուելով հազիւ կը յաջողէին կայք հաստատել Գամիշլի ու շրջակայքի ճահճոտ վայրերը, ճաղճաղ գետի ափերուն, պատմական Մծբին քաղաքի աւերակներուն տակ:

1928-ի տուեալներով՝ Գամիշլիի մէջ կար 10–15 տուն հայ, որոնք չունէին դպրոց եւ զուրկ էին հոգեւոր մխիթարանքէն ու հոգածութենէն⁸: Գամիշլիէն Տիգրան Ռշտունի 8 Դեկտեմբեր 1928 թուականի գրութեամբ, տխուր կը ներկայացնէ այդ շրջանը գտնուող գաղթականներու վիճակը եւ անմիջական օգնութիւն կը խնդրէ: Բացի թշուառներու օգնութեան փութալու խնդրանքէն, ան կը տեղեկացնէ արաբներու եւ թուրքերու քովէն հետզհետէ հասնող որբերու եւ որբուհիներու մասին եւ կը խնդրէ շուտափոյթ միջոցներ որոնել պատսպարելու համար զանոնք⁹: Այս գծով Բերիոյ Թեմի Քաղաքական Ժողովը կը յանձնարարէ ատենապետ Ազիրեանին եւ Ֆարես

⁷ Պշերիկը իր քրտախառն գիւղերու ցանցով մաս կազմած է Սղերդ գաւառին, որ ունէր 7 գաւառակներ՝ Բարվար, Էրուն, Խարզան, Հագօ, Ծիրվան, Ռետվան եւ Սղերդ (**Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստեփան Տ., Բարսեղյան Յ.Խ., Հայաստանի և հարակից շրջանների Տեղանունների Բառարան**, հ.Դ., Երևան, ԵՊՀ Հրատ., 1998, էջ 631):

Պշերիկը 1890-ականներուն Պիթլիս Նահանգի Սասունի շրջանի գաւառակներէն էր, ունէր 57 գիւղ՝ 1597 տուն, բնակիչներուն՝ 852ը հայ ընտանիքներ էին, 745ը՝ քիւրտ: Գարեգին Սրուանձտեանցի վիճակագրութեան համաձայն այս 57 գիւղերէն 40ը հայաբնակ էին: Այդ գիւղերուն մէջ է, որ պատմուած է «Սասունցի Դաւիթ» դիւցազնավէպը: 1915ին Պշերիկէն տարագրուած են 2946 հայեր (**Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստեփան Տ., Բարսեղյան Յ.Խ., Հայաստանի և հարակից շրջանների Տեղանունների Բառարան**, հ. Ա., էջ 713–714):

⁸ «Տարագիր Հայրության Տեղաւորումը Սուրիոյ Գաւառային Շրջաններ», *Գեղարդ Սուրխահայ Տարեգիրք*, Ե. Տարի, Հալէպ, 1996, էջ 93:

⁹ **Ֆիշենկեան Ա., Յուշամատենան Սուրխահայ Օգնութեան Խաչի 1919–2009**, Հալէպ, 2010, էջ 59:

Սապալաղեանին, որ հանդիպում ունենան ՀԲԸՄ տեղական մասնաճիւղին եւ կամ անոր ատենապետին հետ¹⁰:

1929-ի աշնան Թուրքիոյ ներքին գաւառներու հայերուն կը պարտադրուի լքել իրենց անշարժ գոյքերը եւ թրքական անցագիրերով մուտք գործել Սուրիա: «Այդ անցագիրերուն վրայ կը զարնուէր կնիք մը, որ կ'ըսէր «Թուրքիա վերադարձը արգիւտած»»¹¹: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներուն Սուրիա կ'ապաստանին «Արաբկիր, Բալու, Խարբերդ, եւ Բըշէրիքի շրջաններէն տարագրուած հայերը»¹²: Խարբերդէն եւ Բալուէն գաղթողները երկաթուղով կը հասնէին Սուրիոյ սահմանագլուխը, իսկ «Տիարաքիւրի շրջանի հայերը հարկադրուած էին քալելով հասնիլ սահմանագլուխ»¹³: Սակայն 1929-ի վերջին ամիսներուն թուրք-սուրիական սահման հասած (Ախթերինի կայարան) 200 նոր գաղթականները չունենալով անցագիր՝ անոնց ցոյց կը տրուի դէպի Թուրքիա վերադարձի ճամբան¹⁴:

Բերիոյ Թեմի ներկայացուցիչները պաշտօնագիրով կը պարզեն իրավիճակը Մեծի Տանն Կիլիկիոյ ՏՄ Սահակ Բ. հայրապետին եւ անյապաղ լուծում կը խնդրեն: Պաշտօնագիրով կը տեղեկացուէր «Թուրքիոյ ներքին գաւառներէն»¹⁵ Հալէպ հասնող գաղթականներու կարաւաններու մասին, որոնք ենթարկուելով բազմապիսի դժուարութիւններու ապաստան գտած էին Սուրիոյ սահմանամերձ

¹⁰ Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի Արխիւ (ԲԹԱԱԱ), ատենագրութիւն Զաղաքական Ժողովոյ, թիւ 52, 26 Հոկտեմբեր 1928 – 23 Սեպտեմբեր 1930, ՀԷ. նիստ, 22 Նոյեմբեր 1929:

¹¹ **Մարտիկան Զ.**, նշ. աշխ., էջ 105 :

¹² Սուրիահայ Օգնութեան Իսաչի Արխիւ /յետայսու՝ ՍՕԻ-ի արխիւ/, Տեղեկագիր Յունուար-Սեպտեմբեր 1930 Սուրիահայ Օգնութեան Իսաչի Կեդրոնական վարչութեան /Հալէպ, 25 Օգոստոս 1930/, քաղուած Սուրիահայ Օգնութեան Իսաչի ատենագրութեան տետրակ, 1930–1933թթ./:

¹³ **Մարտիկան Զ.**, նշ. աշխ., էջ 106:

¹⁴ «Տարագիր Հայութեան Տեղադրումը Սուրիոյ Գաւառային Շրջաններ», *Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք*, Ե. Տարի, էջ 98:

¹⁵ ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց.1, թղծ. 43, թ. 13:

շրջանները, որովհետեւ անոնցմէ շատեր կանոնաւոր անցագիր չունենալով չէին կրցած համապատասխան վիզա /մուտքի արտօնագիր/ ստանալ Ատանայի ֆրանսական հիւպատոսարանէն¹⁶: Բայց շնորհիւ Միջհայրենակցական Միութեան Վարչութեան խնդրանքին, Հալէպի ֆրանսական Տեղեկատու Դիւանի պետ Քումանտան Գովէռնին կը դիմեն, որ հնարաւորութիւն ընձեռուի եւ արտօնուի այդ գաղթականներու մուտքը Սուրիա¹⁷:

Բերիոյ Թեմի Քաղաքական Ժողովը կը քննէ «Թուրքիոյ Արեւելեան նահանգներէն եւ ի մասնաւորի Խարբերդի եւ շրջակայ գաւառներէն Հալէպ, Հասիչէ եւ Գամիշլի հասած վեց հարիւրէ աւելի ազգայնոց ներկայ թշուառ ու անմխիթար վիճակը»¹⁸, կ'որոշէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն խնդրել Սուրիա հասնողներու եւ գալիք հարիւրաւորներու տեղաւորման, պարենաւորման պարագան ուշադրութեան յանձնել Լիբանանի ու Դամասկոսի Առաջնորդութեանց, ինչպէս նաեւ «*արտասահմանի Առաջնորդութեանց եւ քարեսէր ազգայնոց, վերահաս ծմեռէն առաջ օգնութեան փութալու այս կարօտեալներուն*»¹⁹: Քաղաքական Ժողովը նկատի ունենալով խնդիրի հրատապութիւնը նամակներ կը յղէ ՀԲԸՄ Տեղական Մասնաժողովին եւ Հայ Ազգային Կարմիր Խաչին (ՀԱԿԽ), խնդրելով՝ ստանձնել գաղթականներու խնամատարական եւ բժշկական աջակցութեան կազմակերպչական աշխատանքները համախորհուրդ՝ «Ազգային առաջնորդարանի»²⁰:

¹⁶ ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 43, թ. 13:

¹⁷ ՄՏԿԿԱ ԲԹ, նոյն տեղը:

¹⁸ Նոյնը. Տե՛ս նաեւ ԲԹԱԱԱ, ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ, թերթ 106:

¹⁹ ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 43, թ. 14: Նաեւ ԲԹԱԱԱ, ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ, թիւ 52, թերթ 106:

²⁰ *Տեղեկագիր Հալէպի Գաղթականաց Խնամատարութեան*, 1 Յուլիս 1930, Հալէպ, էջ 2 (ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 82, թ. 16 շրջերես):

Գաղթականներու տեղաւորման ու սննդաւորման հարցով մտահոգ էր նաեւ Ամերիկայի Հայ Կարմիր Խաչի Կեդրոնական Վարչութիւնը: Կազմակերպութիւնը իր Ժ պատգամաւորական Ժողովին՝ արծարծուած գերուհիներու եւ գերիներու ազատագրութեան օրակարգով կ'որոշէ նաեւ ՀԿԽ-ի Սուրիոյ Շրջանային վարչութեան միջոցով նոր տարեշրջանէն սկսեալ այս գործը աւելի արդիւնաւետ կազմակերպել. «Նոր գաղթը Սիւրիոյ սահմաններէն ներս՝ գրաւած է մեր խոր ուշադրութիւնը եւ Պարզամաւորական]. Ժողովէն չնախատեսուած այդ պարագան ստիպած է Կեդրոնս, որ սահմանուած պիւրճէին մէջ կատարէ այնպիսի տնտեսութիւն մը, որով այդ շրջանի միւս կարիքները հոգացուին խնայողաբար, որպէսզի չտուժեն այլ Շրջանները՝ իրենց համար նախատեսուած պիւրճէին»²¹:

19 դեկտեմբեր 1929-ին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Սահակ Բ. Խապայեանի հովանաւորութեամբ եւ վաւերացումով, Հալէպի մէջ կը կազմուի ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆԱՅ ԽՆԱՄԱՏԱՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ /ՀԿԽԿՅ/ մը, կազմուած՝ բժշ.ներ Ալթունեանէ եւ Յարութին Տէր Ղազարեանէ, Հայր Գաբրիէլ ծ.վ.Գասպարեանէ, Արմէն Մազլումեանէ եւ Գրիգոր Ազիւրեանէ²²: ՀԿԽԿՅ-ին կը յանձնարարուի գաղթականներու պաշտպանութիւն, տեղաւորում, առողջապահական, որբահաւաքման օգնութեան կազմակերպում: Փոքր խումբերով Սուրիա հասնողները Կեդրոնական Յանձնախումբի կողմէ սկզբնապէս կը տեղաւորուէին Հալէպ քաղաքի Նոր Գիւղ արուարձանին մէջ: Սակայն պշերիկցիները կը նախընտրէին Գամիշլի եւ Հասիչէ /Թէլ Պրագ/ բնակութիւն հաստատել՝ դարձեալ երկիր վերադառնալու յոյսով:

Խնամատարութիւնը 1929-ի դեկտեմբերի կիսուն Տոքթ. Թորոս Պասմաճեանին արդէն յանձնարարած էր երթալ Գամիշլի եւ

²¹ **Ֆիշենկճեան Ա.**, *Յուշամատենան Սուրիահայ Օգնութեան Իտալի* նշ. աշխ., էջ 55–56:

²² Եփրատ Օրաթերթ, 14 Դեկտեմբեր 1929, Հալէպ, էջ 3:

շրջանները, ուսումնասիրել նորեկ գաղթականներու կացութիւնը եւ հնարաւորինս կատարել անհրաժեշտ աշխատանքը այնտեղ ընթացք առած տարափոխիկ հիւանդութեանց կասեցնելու եւ տեղեկագրով պարզել իրավիճակը²³: Տեղեկագիրէն կ'իմանանք որ ծաղկախտը բոյն դրած էր երեխաներուն մէջ եւ հարիւրէ աւելի կեանք խլած²⁴: Գաղթականաց Խնամատարութեան կողմէ շրջանը ուղարկուած Տոքթ. Պասմաճեանին կ'ընկերակցէր ՀԲԸՄ պաշտօնատար Մ. Թերճանեանը՝ միասնաբար ժողովուրդը պատուաստելու եւ նպաստ բաշխելու²⁵:

Գաղթականաց Խնամատարութեան Կեդրոնական Յանձնախումբը, որ կը գործէր հայ երեք յարանուանութիւններու համայնքապետերու միացեալ հովանաւորութեամբ, արտասահմանի հայ մամուլին միջոցաւ ահազանգ կը հնչեցնէ՝ հայ գաղթականներուն օգնութեան կոչերով, ներկայացնելով անոնց կացութիւնն ու կարիքները: Խնամատարութիւնը մասնաւոր դիմում կը ներկայացնէ՝

1- Հալէպի զինուորական Me'decin Principal՝ Քօլօնէլ Քոզրէի, որու աջակցութեան շնորհիւ առողջապահական սպասարկութիւն կը կատարուի գաղթականներու շրջանին մէջ:

2-Կապ կը հաստատէ Ազգ. Դաշնակցութեան Սուրիոյ գաղթականաց տեղաւորման ներկայացուցիչ Մր. Պիւրնյէի, տեղւոյս Բ. Քո-

²³ ՍՕԻ-ի արխիւ, 1930–1933-ի ատենագրութեան տոմար, «Տեղեկագիր Տոքթ. Թորոս Պասմաճեանի, Յունուար-Մեպտեմբեր 1930 Սուրիահայ Օգնութեան Խաչի Կեդրոնական Վարչութեան, թ.107»: Հալէպի Հայ Ազգային Կարմիր Խաչի վարչութիւնը 3 Դեկտեմբեր 1929 թուակիր եւ 422 համար գրութեամբ՝ Բերիոյ Թեմի Քաղաքական Ժողովէն կը խնդրէ «Գաղթականաց Խնամատարութեան կազմակերպումը վստահիլ Հայ Ազգային Կարմիր Խաչի ամբողջական կազմին»: Քաղաքական Ժողովը իր ՀԸ նիստին (3 Դեկտեմբեր 1929) կ'ընտրէ Սարգիս Սէլեանն ու Ն. Մաթոսեանը՝ իբրեւ օժանդակ անդամ Կարմիր Խաչի մօտ Գաղթականաց Խնամատարութեան մէջ աշխատելու (Տե՛ս ԲԹԱԱԱ, ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ, թիւ 52, թերթ 108):

²⁴ **Ֆիշենկճեան Ա.**, «Հայերու Հոսքը Դէպի Սուրիոյ Հիւսիս-Արեւելեան Շրջանները, Թէլ Պրագ (Սկիզբէն Մինչեւ 1938)», Տաթեւ Հայագիտական Տարեգիրք, հ. 1, Հալէպ, 2008, էջ 312:

²⁵ Եփրատ, 28 Դեկտեմբեր 1929, Հալէպ, էջ 3:

միսերի պատուիրակին, Ընդհանուր ապահովության եւ տեղեկատու դիւանի պետերուն հետ՝ նիւթաբարոյական աջակցութիւն ապահովելու յօգուտ նորեկներուն:

3-Նամակներ կը յղէ ՀԲԸՄ Փարիզի կեդրոնին եւ օտար բարեսիրական հաստատութեանց, միաժամանակ ընդհանուր կոչեր կ'ուղղէ ողջ հայութեան:

4- Առողջապահական, կազմակերպչական, կրթական հարցեր կարգաւորելու համար իր աջակցութիւնը կը ցուցաբերէ նաեւ Սուրիահայ Օգնութեան Իսաչի կեդրոնական Վարչութիւնը համախորհուրդ Ամերիկայի Հայ Կարմիր Իսաչի հետ:

Կոչերը անարձագանգ չեն մնար: ՀԲԸՄ-ը Փարիզի մէջ կը կազմէ Հանգանակիչ Կեդրոնական Յանձնախումբ եւ զարկ կու տայ հանգանակութեան գործին: Հանգանակուած գումարը կը տրամադրուի 129 լծկան եզներու գնման, սերմնացուի եւ թումբի շինութեանց եւ այլն²⁶: Հանգանակութեան կը ձեռնարկեն՝ «Յառաջ», «Հորիզոն», «Նոր Օր» եւ «Յուսաբեր» թերթերը²⁷: Հայկական հեռաւոր գաղթավայրերէն գաղթականներուն դեղորայք, հագուստեղէն եւ նիւթական օժանդակութիւն կը հասնին: Օգնութեան կը փութան նաեւ օտար միսիոնարներ ու երոպական բարեսիրական շրջանակներ:

Այսպէս՝ Խնամատարութեան Կեդրոնական Յանձնախումբը, գործի մղելով նաեւ իր մասնաճիւղերը, 19 դեկտեմբեր 1929-ի որոշումով շրջանը կը ղրկէ բժիշկ ու մեծ քանակութեամբ դեղորայք ու անմիջական խնամքի տակ կ'առնէ զանազան հիւանդութիւններէ տառապող 120 մանուկներ: Մալարիան ամէնէն սպառնալից հիւանդութիւնը կը հանդիսանար այս ճահճոտ միջավայրին մէջ: Նոյն օրերուն 47 հակ հագուստեղէն կը տրուի գաղթականներուն: Ամէնէն

²⁶ *Տեղեկագիր եւ հաշուեկշիռ Գաղթ. Խնամատարութեան Կեդր. Յանձնախումբի* (1929 Դեկտ.-1932 Մեպտ.), Հալեպ, 1932, էջ 7:

²⁷ *Տեղեկագիր եւ հաշուեկշիռ*, նոյն տեղը:

մտահոգիչը բնակարանային խնդիրն էր: Գաղթականները յաճախ երկու կամ երեք ընտանիքներով կը բնակէին իրենց շինած մէկ սենեակնոց հիւղերու մէջ:

ՀԳԽԿՅ-ը 1930-ի Փետրուարին, Հասիչէի եւ Գամիշլիի շրջանները ապաստանած նոր ու հին գաղթականներու, շուրջ 5000 պշե-րիկցիներու կեցութեան ու տեղաւորման հարցերը պատշաճ կերպով կատարելու համար, կը յառաջացնէ ԳԱՂԹԱԿԱՆԱՅ ՏԵՂԱ-ԻՈՐՄԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ՝ հետեւեալ անձերէն բաղկացած. վեր. Ահարոն Շիրաճեան, բժշկ. Թորոս Պասմաճեան, Միսաք Մելքոնեան, Տիգրան Ռշտունի, Ճեմիլ Տիլէնճի, Միշէլ Թերճանեան, Եագուպ Մանկալօ²⁸: Յանձնախումբը ամէն լիազօրութիւն ունէր Գամիշլիի եւ Հասիչէի շրջաններուն մէջ «մահմուլ»²⁹ հողերու իւրացման եւ գնման, գիւղերու հաստատումին, տուներու շինութեան, գաղթականներու ցանկագրման, տեղաբաշխումին, տեղաւորման եւ նպաստի բաժանումին³⁰:

Ֆրանսական Մանդատի /հոգատարութեան/ իշխանութեան, տեղական կառավարութեան եւ յանձնաժողովի կողմէ կ'ուսումնասիրուի տարածքը: Ֆրանսական եւ տեղական իշխանութիւնները կը հրաժարին գաղթականները տեղափոխել Սուրիոյ ներքին գաւառները եւ պատրաստակամութիւն կը յայտնեն անոնց տրամադրել ձրի հողեր³¹ եւ նիւթական աջակցութիւն: Գամիշլի եւ Հասիչէ

²⁸ Տե՛ս **Զոլաքեան Յ.**, *Փաստաթուղթեր Ճեզիրէի շրջանի հայ գաղթականութեան եւ Թէլ Պրաքի քով Սահակաշէն եւ Մեսրոպաշէն գիւղերու հաստատման մասին*, Հայկազեան հայագիտական հանդէս, հ. 41, Պէյրութ, 2021, էջ 681:

²⁹ «Մահմուլ» հող- սեփականութենէ լուծարուած գետին:

³⁰ *Տեղեկագիր եւ հաշուեկշիռ*, նոյն տեղը, էջ 8–25:

³¹ Իշխանութիւններու կողմէ կը նախատեսուի տրամադրել ձրի հողեր եւ նիւթաբարոյական աջակցութիւն: Գաղթականներու հաստատման համար գլխաւոր 4 վայրեր նախատեսուած էին՝ Թէլ Ալի Էֆէնտիի բլուր, Չաքր- Պազար- Թեփէ, Թէլ Պրաք եւ Կարանա (այսինքն՝ Ճէպլի Փէքօք եւ Սինճար): Այս վայրերէն Յանձնախումբի կողմէ նպատակայարմար կը գտնեն Թէլ Պրաք վայրը: (Տե՛ս *Տեղեկագիր եւ հաշուեկշիռ*, նոյն տեղը, էջ 9–14):

ապաստանած գաղթականներու բնակութեան եւ տեղաւորման համար կը տրամադրեն ընդարձակ եւ բարեբեր հողեր՝ թրքական սահմանէն 50 քլմ. հեռաւորութեան վրայ: Իսկ Հալէպի Գաղթականաց Ենթայանձնաժողովի կողմէ Գամիշլի կը դրկուի Վեր. Շիրաճեան, նորեկ գաղթականներու կացութիւնը ուսումնասիրելու: Յանձնախումբի տեղեկագիրէն կը պարզուի գաղթականներու իրավիճակը, ըստ որուն գաղթած 600 ընտանիքներէն միայն 50ը ինքնաբաւ է, 150ին հող, տուն եւ «200ին թէ՛ հող, թէ՛ տուն եւ թէ՛ լծկան ու սերմնցու եւ լծկան տալէ վերջ, ստիպուած ենք մինչեւ յառաջիկայ գարուն ապրեցնել»³²: Մնացեալ 200 ընտանիքը բոլորովին չքաւոր. յանձնախումբը օգնութիւն ցուցաբերելէ բացի հարկ կը համարու էր մինչեւ գարուն «ապրեցնել զանոնք»³³ :

Թէեւ Հայ Գաղթականաց Խնամատարական Կեդրոնական Յանձնախումբն ու ֆրանսական եւ տեղական /սուրիական/ իշխանութիւնները ամէն ճիգ ի գործ դրած էին տրամադրելով անոնց սննդամթերք, նպաստ եւ բազմապիսի օժանդակութիւն, սակայն գաղթականներէն, յատկապէս վրանաբնակները կը ցանկային մշտապէս տեղաւորուիլ: Հետեւաբար, շատեր կայք կը հաստատէին Ամուտա, Ռաս-ուլ Այն, Տերպեսիէ, Հասիչէ եւ Տէր Զօր: Պշերիկցիներէն շատեր կը մասնակցին Տէր Զօրի կամուրջի շինութեան աշխատանքներուն: Իսկ գաղթականներէն ոմանք ալ բնակարանային եւ ապրուստի դժուարութիւնները լուծելու համար տեղաշարժի կը դիմէին եւ կը տեղափոխուէին Տերիք ու շրջակայքի Այն Տիվար, Ուանըգէ, Պազընտանէ, Հաքամիէ եւ այլ գիւղեր՝ Տիգրիսի մօտակայ ափերուն³⁴:

³² ՄՏԿԿԱ ԲԹ, հ. 3, ց. 1, թղթ. 82, թ. 3:

³³ ՄՏԿԿԱ ԲԹ, նոյն, թ. 3:

³⁴ **Մակարեան Ա.**, «*Εξουσιασίου Εζηρηκισμένων Ει Ανελες Γαղαθ Σουρիա, անտիպ*, Հալէպ, 2003, էջ 17:

Յիշենք, որ պշերիկցիներու զանգուածային մեծագոյն գաղթը տեղի կ'ունենայ 1927–1930 թթ., ընդհանրապէս, գերդաստանական համախմբումով: Ամենամեծ խումբը, շուրջ 450 ընտանիք, Սուրիա հասաւ 1930-ի Յունուարին:

Արդարեւ, Գաղթականաց Տեղաւորման Յանձնախումբի մեծագոյն իրագործումը կ'ըլլայ Թէլ Պրաքի մէջ կառուցուած երկու գիւղեր՝ Սահակաշէնն ու Մեսրոպաշէնը³⁵: Ան նոյն հոգածութիւնը ցուցաբերած է նաեւ գամիշլիաբնակ գաղթականներուն նկատմամբ:

31 Մարտ 1930ի տուեալներով, գաղթականները մեծ մասամբ տեղաւորուած էին Սուրիոյ հիւսիս-արեւելեան հետեւեալ շրջաններու մէջ.-

«Հասիչէ՝ 100 ընտանիք լուսաւորչական եւ 100 ալ հայ կաթոլիկ: Գամիշլի՝ 400 ընտանիք լուսաւորչական եւ 30 ընտանիք կաթոլիկ հայեր: Գարամանիէ՝ 15 լուսաւորչական եւ հայ կաթոլիկ: Ամուտա՝ 20 կաթոլիկ եւ 40–50 տուն լուսաւորչական»³⁶: Գամիշլիի, Տերիքի եւ Հասիչէի շրջաններուն մէջ պշերիկցիներու տեղաշարժերը կը տեսնեն շուրջ հինգ տարի, մինչեւ որ անոնք մեծ մասով կը հաստատուին Գամիշլիի եւ անոր մօտիկ տասնեակ գիւղերուն մէջ, որոնցմէ շատերը անոնց ձեռակերտներն էին: Անոնք հողի մարդիկ էին, հողի կարօտով ապրող մարդիկ: Քաղաքի կեանքը նեղ եւ ճնշիչ կը թուէր անոնց: Գամիշլիի շրջակայքը կը տարածուէին ընդարձակ դաշտագետիներ, արօր չտեսած պարարտ հողեր, որոնք սեփականութիւնն էին շրջանի արաբ շէյխերուն: 1930-ական թուականներէն սկսեալ, պշերիկցիները կը նախաձեռնեն հայկական գիւղերու կառուցման աշխատանքին: Կարճ ժամանակաշրջանի մէջ Գամիշլիի շրջակայքը կը կառուցուին շուրջ 25 զուտ հայկական գիւղեր՝ աղիւսաշէն բնակարաններով: Իւրաքանչիւր գիւղ կ'ունենայ իր

³⁵ Տե՛ս **Ֆիշենկճեան Ա.**, *Սուրիական Ճեզիրէն եւ նորագաղթ հայերը (Թէլ Պրաք)*, Էջմիածին ամսագիր, ՀԷ տարի, համար Դ., Էջմիածին, 2020, էջ 92–116:

³⁶ **Մակարեան Կ.**, նշ. աշխ., անտիպ, նոյն տեղը:

գիւղապետը (մուխթար): Նորաշէն գիւղերը ունէին մէկէ աւելի թոնիր եւ ըմպելի ջրի մատակարարման ջրհոր: Գիւղերուն արտերը մեծաւ մասամբ կ'ոռոգուէին ճաղճաղ գետի ջուրերով:

Գիւղակերտումի այս իրագործումը նոր եռանդով կը համակէ պշերիկցիները, որոնք կը նախաձեռնեն ցորենի եւ արմտիքի մշակման: Անոնք կը մշակեն նաեւ բանջարանոցներ, կը խնամեն ոչխարի հօտեր եւ արջառ, իսկ կիները կը զբաղին հաւաքուծութեամբ, ինչպէս նաեւ ձմրան վառելիքի ապահովման եւ ուտեստեղէնի ամբարման աշխատանքով: Ժրաջան էին պշերիկցի կիները: Անոնք վարուցանի, հունձք ու կալի ատեն կ'օգնէին իրենց ամուսիններուն:

1945-ին կը յիշուի 32 գիւղերու անուն. Ուրթուրթիէ (Վուտվուտ), Հըրքօ, Տալաուիէ, Տպպանա, Աուէճա, Ապու Ճալալ, Թլսում, Ճուխա, Մլուքսարա, Շամասիէ, Հմերա, Շէյխաճիլ, Ճնետի Մեծ, Ճնետի Փոքր, Չրգօ, Սլամալէք, Մասհատա, Հլելիէ, Տայօ, Հիմօ, Ճմաքէ, Զանտա, Հարպա, Գզըլճա, Ամրի, Տերիք Մալքիէ (Տերիք), Հեքքօ, Ղզըլճաղ, Թարթափ, Թէլ Քէօչէք, Թէլ Սեմիր, Վանիկ (Ուանըգէ) եւ այլն³⁷:

Սուրիոյ հիւսիս-արեւելեան /Ճէզիրէ կոչուած/ շրջաններ հասնող գաղթականները տեղաւորուելով Հասիչէի, Գամիշլիի, Թէլ Պրագի, Տերիքի եւ այլ շրջաններու մէջ, կ'ունենան համայնքային կեանք: 1942-ին կը հիմնուի Հիւսիսային Սուրիոյ Ճէզիրէի Առաջնորդական Փոխանորդութիւնը՝ համարատու Բերիոյ Հայոց թեմի Ազգային Առաջնորդարանին:

1946-ի Մեծ Հայրենադարձութեան աւետիսը կը հասնի նաեւ Գամիշլի եւ շրջակայքը: 1965–1966՝ Գամիշլիի եւ շրջակայ շուրջ 30 հայաբնակ գիւղերու բնակչութենէն 4000 հայեր կը ներգաղթեն

³⁷ Տե՛ս **Ֆիշենկճեան Ա.**, *Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը 1946–1970 թթ.*, Երեւան, 2018, էջ 69–70:

Հայաստան³⁸, որու հետեւանքը կ'ըլլայ նորակառոյց գիւղերու վերջնական պարպումը հայութենէ:

Եզրակացութիւն. Սուրիա-Թուրքիա-Իրաք սահմանամերձ, ճէզիրէի հայոց կամ հայ համայնքի ձեւաւորման պատմութեան վերաբերող յօդուածներ բազմիցս են, սակայն ամբողջութեամբ չեն պարզեր շրջանը թափանցող հայ եւ այլազգի գաղթականներու իրավիճակը, Բարեսիրական միութիւններու կողմէ այդտեղ տարուած խնամատարական աշխատանքները, հողային խնդիրները, տեղական մարմիններու հետ յարաբերութիւնները եւ այլ հարցեր: Ուստի, անոր ուսումնասիրութիւնը անհրաժեշտ պահանջ է եւ այժմէական, որովհետեւ հակառակ Սուրիոյ տասնամեայ պատերազմին, մինչ օրս հայ համայնք գոյութիւն ունի եւ 80-ամեայ կեանք ունեցող Առաջնորդական փոխանորդութիւնը կը շարունակէ իր առաքելութիւնը:

БЛАГОТВОРИТЕЛЬНАЯ ПОМОЩЬ АРМЯНАМ БЕШЕРИКА, МИГРИРОВАВШИМ В СЕВЕРО- ВОСТОЧНЫЕ РЕГИОНЫ СИРИИ

ФИШЕНКДЖЯН А.

Резюме

Ключевые слова: Армяне из Пшерика, ЦК по патронатному воспитанию мигрантов, Сурия, Тель Прак, Гамишли.

В 1929 году несколько сотен армянских семей бежали из юго-восточной Турции в районы Гамишли и Хасиш в Сирии. Для решения проблем, связанных с расселением и другими нуждами

³⁸ Տեմիրճեան Վ. Եպս, Գաւազանագիրք, *Լիբանանի Եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեանց*, Կ. Ա., Անթիլիաս, 1980, էջ 491:

беженцев,- религиозные лидеры трех армянских общин в Алеппо сформировали центральный комитет, который, в свою очередь, учредил специальный подкомитет для изучения и оценки ситуации, разработки планов расселения и внесения предложений по реализации планов. Беженцы хотели: а) жить недалеко от турецкой границы с мечтой вернуться на родину; б) жить группами. Это сделало невозможным их расселение в городских центрах и обусловило потребность в новых сельских поселениях.

CHARITY TO THE ARMENIANS OF BESHARIK WHO MIGRATED TO THE NORTH-EASTERN REGIONS OF SYRIA

FISHENKJIAN A.

Summary

Keywords: Armenians from Psharik, Central Committee for Migrant Foster Care, Syria, Tel Prak, Gamishli.

In 1929 several hundred Armenian families from south-eastern Turkey fled to the Qamishli and Hasice regions of Syria. To address the settlement and other needs of these refugees, the religious leaders of the three Armenian denominations in Aleppo formed a central committee, which in turn established an ad hoc subcommittee to examine and assess the situation, come up with plans of settlement, make recommendations and work towards their realization. The refugees were keen on to: a) living close to the Turkish border with the dream of returning to their native lands; b) living in groups. This made their dispersion in urban centers unfeasible and necessitated the creation of new residential rural areas.